



Նղեշէ Արք. Դուրիեամ

## ՀՈՎՀՈՒԱԿԱՆ ՍՐԻՆԴ.

(Դուրիեամ Արք. Թուրելեամիս առքի)

— — —

Կէս դարու ճգնող երկունքէն յետոյ,  
«մենաւոր խոկումն ու շունչն անհունին»,  
հովերու քողով ծրարուած՝ կը պարզուին,  
կը ծաւալին բանաստեղծի տեսիլները,  
զրագէտի խորհուրդները և ուսուցիչին  
յոյսերը. և ահա Դուրիեամ Սրբազն կաս-  
տեղանայ մեր զրական երկնքին վրայ:  
Նրա փայլը շատ գունալից է, նման Հա-  
յաստանի գարուններուն, ու շողերը ա-  
մնազան՝ թափանցիկ բեկրեկումներով:

Սրբազնի հոգւոյն մէջ տոչորուող ձէթն  
եղաւ մաքուր ազգասիրութիւնը, որ իրեն  
տուաւ Խրիմեան Հայրիկի ճարճատումը,  
բանաստեղծական շնորհով զեղուն, և ա-  
ռեկելեան լուսնի մը բակով շըջանակուած,  
ուր ամէն հայ անխտիր կարող էր գանել  
հիացմունքի և յարգանքի առարկայ:

Ոչ ինչ այլ բան արժանի պիտի ըլլար  
Դուրիեամը անմահացնել, եթէ զրականուա-  
թիւն և ազգասիրութիւն, Մխիթարայ  
սրբազործած զարերէն յետոյ, անոր հո-  
գին չզարդարէին, և այն ատեն յորելեան  
ու հանդէս տժոյն վերջալոյսի մը տպա-  
ւորութիւնը պիտի թողնէին հեռաւորներու  
և մերձաւորներու վրայ:

Բայց ահա Վոսփորի ափունցներուն  
վրայ, ալիցներու քնարաձայն օրօններու  
մէջ, կազմուեցաւ անոր հոգեկան ամրող-  
ջութիւնը, այնտեղ կարծես Փիդիասի  
արուեստը բիւրեղացած կոհակներէն կեր-  
տեց պարթև հասակով յուշարձան մը, Որ-  
փէս տուաւ զալարուող քնարը, Հոմերոս  
շընչեց աստուածային արուեստի հոգին:  
Սակայն հայրենի զեփիւոն էր որ կը խա-

դար անոր լարերուն վրայ, այն ջերմասիրտ հովիկը, որ կ'անցնէր անապատն ու ամայութիւնը և կը խառնուէր նազովրեցւոյն խարտեաշ խոպոպիքներուն, գեթսեմանիի վարդերուն, Մարիամի համրոյըներուն։

Այսպէս Դուրեան՝ Դուրեանի արշալոյսէն ճառագայթ մը խլեռվ փութաց իր արկմուտքը հրդեհել։

Ու կարծես կայծակ մ՛ըլլար այդ ճառանջը, որ վատեց կամարածիգ այն ուղին ուսկից անցաւ բանաստեղծը։ Այդ Մերուպի հոգույն շունչն էր, մեր սրբացած Այրուքնն էր, դարբնած զեղարտեստի ձուլարանին մէջ, օծուած ապազայի տեսիլըով որ վարդապետին տուաւ երիտասարդ հաւատը մը, անզուազ խանդ մը, աննկուն հոգի մը։ Այդ օրէն գրականութիւն և դպրոց եղան Սրբազանին ճանշած աշխարհը։ Նա առաւելապէս սիրեց մանուկներու դպրոցը ուսուցչական բարձր և ազնուական նուիրումով։

Ժամեր, օրիր, տարիներ սահնեցան, սակայն վարդապետը, Սրբազանը և Պատրիարքը որպէս վաղեմի զինուոր մը՝ անշարժ և անսպառ մնաց իր նուիրական պարտականութեան սեմին վրայ։ Ինե այսօր իսկ իր սիրելի գասարանին մէջն է, կանգնած հայրական յուզումով և հոգածութեամբ, մանուկներու զիխուն վերե, մտադիր և զուարթերես, զածուած հոգիով կ'ունկընոցէ աննոց հեշտալուր թոթովանքները, ինչպէս անձերանալի վերջալոյս մը որ կ'ունկնորդ բնութեան զարթումը։

Սրբազանը ոչ այնքան միտքը զեղեցկին զօղելու աշխատանքը կը թափէր, որքան շունչ կու տար մեսրոպեան տառերուն, որոնք իրքէ կենանի բարբառներ՝ թեեր առած կը թոչէին շրթունքէ շրթունք, սրտէ սիրտ, որպէս ազգային հաւատամք, յուռութիւ պէս հայր հայուն կապելու մոգութեան արուեստով։

Դուրեանի դպրոցը անհորիզոն աշխարհ մ'էք և ոչ քառակուսի պատ մը, և ոչ գրի մը էջերը իր ծովածաւալ զիտութեան սահմանը իւրաքանչիւր հայուն սիրտն ու միտքը

եղաւ իր սիրած դասարանը, աջալուրջ հսկումով հստեկեցաւ ամէն մէկ զաղթական հայու քայլերուն, ուր իր ծայնը չհասաւ բնարի թեւերը խօսեցուց, ուր իր անձը չկար՝ զիրքը հասցուց։ Կէս դարու շրջանին իր տիրական և պատկառելի գործուն հոգին սերտօրին կապեց բովանդակութիւնը բազով էր նաև որ իր թորելեանին ծայնն ալ ունենար մի խոր և կենդանի աղձագանգ հայ սրտերու մէջ։

Թէսպէս օտարութիւն և տառապանց և ու օրեր մեզմէ խլեցին ուրախութեան ամէն հաճոյք, սակայն հոգիով զրաւէր, արուեստի բնազովով ծնած հայը, նորէն յուզուեցաւ իր հոգույն խորը, զգաց մի խուլ և անսովոր ցնցում, կարծես այնտեղ կանգնեցան Սրբաշտուի և Այնիի երջանիկ օրերը։ Նա մի երիտասարդի հասուն խանզով հրապարակ նետուեցաւ, իր սրտի բարախումը հովին տուաւ, հովը ալիքին, ալիքն առաւ ու տարաւ աշխարհի ամենախուլ անկիւնն ալ՝ ուր ապահովարար մի հայ պիտի գոնուէր, ահա վաղուց սրտերու մէջ ծածկուած հիացուիր բորք՝ յիսուն տարի կոշկուուած ալենորի հանդէպ, բռնկեցուց թերթու լրագիր։

Այս ժողովրդական հիացումին արտաքին երեսն էր. այն ինչ որ Սրբազանի դրական և ներքին արժէքը կը կազմէ, այդ կարելի չէ խանզերով ու ճառերով չափել։

Խանդակառութիւն և յուզում ուշ թէ շուտ կը մարին, ինչպէս ամէն փառքերով ծնած արշալոյս՝ վերջալոյսի մը մահերգն է, Այն՝ որ Դուրեանին պիտի տայ անմահութեան հոգի, պիտի կանգնէ հայ սրտերու մէջ անհեղանելի յուշարձանը, առ այժմ անոր հովուական սրինգն է։

Մի ամենանուորը, ամենազնիւ և ամենափափուկ ստեղծագործում, եզական և միակը մեր գրական սրտագրութեանց մէջ։ Իր ամրողական քնքութիւնը, աննշան կ'ընէ կետ կան ինչ ինչ թերութիւններ և յաճախակի հակաղորութիւններ։ Այն եղաւ Դուրեանի արդիւնքը որ հիմադիր եղաւ կրօնաշունչ և ինքնասիպ բանաստեղծու-

թեան մը, աշխարհաբարի մէջ, տալով աւարտուն գործ մը, ու շատեր՝ մանաւանդ իր աշակերտներէն, փորձեցին նոյն արուեստը և լոկ ձեմի մէջ մնացին, առանց թոփչքի, առանց ինքնարուիս արուեստի:

Անոր սրինզի ձայնը Յորդանանի ափունցներէն կու գայ խառնուած անապատի տաքուկ հովին: Եւ սրինզի հոգեշունչ կոհակները աղօթքի պէս անոյշ են, աղքիւրի պէս կարկաչուն, զարնան պէս զունալից: « Քարիւ զարիւ » կու գան ու կը բախին իմ սրտին, քո պատին, բոլոր քնարերուն սրտերուն, մոլորեալ զեփիւրի մը հեշտութեամբ:

Եւ երբ անցնին սոյլերը հեշտին, ու պահիկ մ'անոր զեղգեղանըը լոէ, սիրտ կ'երգէ տակաւին երգ մը որ քեզ համար ալ զաղտնիք է, խորհուրդ է, բայց անոյշ և ընտանի, որ գոյն ունի, բոյը ունի, կարծես նարդոս-քրցումով շաղուած կը տարածուի շրթներուդ վրայ, հոգիիդ վրայ. այժմ զուն ես Հովուական սրինզը որ կ'երգես մի հոգեկան կախարդանըով:

Եւ ահա ներքին աշխարհիդ անհորիզոն երկներին մէջ կը վերածի, խորհրդաւոր գուշակի կերպարանքով, ալեոր հովիւ մը եղէզնեայ ոստոտ ցուազը ձեռին, սպիտակ և երշանիկ հօտը ոտքերուն տակ փոռուած, Յորդանանէն կ'անցնի դէպ ի Սաղէմ, դէպ ի Գեթսեմանի, դէպ ի Էմմառու...:

Յուշիկ յուշիկ կը բալէ, սիզի պէս կ'անցնի. հարաւէն կու գայ, արմաւենիներու տակէն կու գայ, մասունք զարձած սրինզը մասներու արանցին, և անոր ակերէն երգը կը ծորի, և անոր աչքերէն արցունք կը հոսի:

Նրա հրարոյր սրինզը կտրուած էր Գեթսեմանիի մէջ անթուական ժամանակներէն աճող մի սպիտակ վարդենիէ. որուն համար կըսեն թէ վարդ ունի ամառ ձմեռ, ճիւղեր ունի զմրուխտի նման, տերեներ ունի խարտեալ վարսերէ հիւսուած, արեւուն տակ սաթի նման լոյս կը ծորէ, լուսինին ատկ մոմի պէս կը գեղնի: Ու կըսեն թէ այդ վարզը պիտի ապրի մինչև աշխարհի վերը, ըստ որպէստու ծլած է Մարդունացին արցունցներէն, երբ Զատկի արշալոյսին յուսահատ կու լար:

Այդպէս պիտի մեայ և Դուրեսանի Սրինզը, որովհետև ինցն էլ արրեցած է այդ արցունըի աղքիւրէն. ինցն ալ փնտուած է դրախտի մէջը ցալող Աստուածը, ինցն ալ երգած է թեթղեչէմէն մինչև Համբարձում տանող ողբերգական խորհուրդը: Ու զորովին խառնած զեղեցկին շապարը հոգեղչն գէրգին՝ երգի բալուանը, ալէն առաւոտ թարմացած ձայնը, երկնելու իյնող շողերու նման մարմին առնելով ամպերու ցոլէն տարագիր կու գայ հովերու թերին Հովուական սրինզը սեղանին վրան: Անոր է շերուն մէջ կը նայիմ ինչպէս զուարթ արշալոյսի, անոնց կը խորանինան իրըն մտածումի երկինքներ, իմ հոգիս ալ կը խորասուզի լայն ու մաքուր էջերուն մէջ: Այնտեղ կը զգած բուրդումն անմահութեան աներենոյթ և սակայն շօշափելի. այստեղ ուրեմն անմահութեան աղքիւր կայ, ուսակից կ'արբենամ ես, կ'արբենաս զու:

Անոր ակն ալ ուրեմն անմահ է և անմահ պիտի մնայ:

Հ. Վ. ՅՈՎՃԱՆՆԵՍԻՆ